ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 հունիսի 2018 թվականի N 66-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2018թ. հունիսի 25-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին» N 509-Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի՝

1) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագիր՝ 68-3.1-9, 68-3.1-16) անձնագրերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետը, կամ Բաժնի առաջատար մասնագետը:

Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի պետի, Բաժնի մյուս գլխավոր մասնագետի, Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:».

2) կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի՝

ա. առաջատար մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 68-3.2-(15-16)) անձնագրերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կամ Բաժնի մյուս առաջատար մասնագետը:

Բաժնի առաջատար մասնագետը Բաժնի գլխավոր մասնագետներից մեկի, Բաժնի մյուս առաջատար մասնագետի, Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:».

բ. առաջին կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-4.1-11) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի առաջատար մասնագետներից մեկը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

28.06.2018

X

VERIFIED OCSP 28.06.2018 19:01.32 GMT+4

Подписано: HAMBARDZUMYAN KAREN 2611820473

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2018թ. հունիսի 28
ք. Կապան